ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

20 փետրվարի հինգշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

21
(3052)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԾԱԽՍԵՐԻ ԻՐԱԿԱՆ ԹՎԵՐԸ ԹԱՔՑՆՈՒՄ ԵՆ

Նիկոլ Փաշինյանի եւ իր գլխավորած պատվիրակության այցը ԱՄՆ 4,5 անգամ ավելի մատչելի է եղել, քան 2 օրում Սեւանի շուրջը կատարած «փաշինյանական հեծանվավազքը»: Հիշեցնենք, որ 15 մլն դրամ՝ գրեթե 40 հազար ԱՄՆ դոլար էր արժեցել Սեւանի շուրջ երկօրյա հեծանվավազքը:

Փետրվարի 3-ից 7-ը ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի պատվիրակությունը եղել էր Ամերիկայի Միացյալ Նահանգների մայրաքաղաք Վաշինգտոնում, որի համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացվել է 3 մլն 361 հազար 119 դրամ: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթի հարցին ի պատասխան հայտնել էին Վարչապետի աշխատակազմից:

Իհարկե, Վարչապետ Փաշինյանի այցը Ամերիկա շատ հարցեր է առաջացրել, եւ գրեթե որեւէ մեկը պատասխան չի ստացել: Թե ինչ էր անում հայկական պատվիրակությունը վարչապետի մակարդակով Վաշինգտոնում անցկացվող 5-րդ ամենամյա Միջազգային կրոնական ազատության գագաթնաժողովի նախաճաշին, եւ թե ինչ էր կորցրել աթեիստ Արսեն Թորոսյանը «Ազգային աղոթքի նախաճաշին» վարչապետի եւ կառավարական պատվիրակության հետ, հարցական է:

«Ժողովուրդ» օրաթերթը հարցմամբ դիմել էր նաեւ Ազգային ժողովի աշխատակազմ եւ հետաքրքրվել, թե որքան է արժեցել Արսեն Թորոսյանի այցը ԱՄՆ:

Հարցմանն ի պատասխան հայտնել էին. «Սույն թվականի փետրվարի 3-6-ը Վաշինգտոն Ազգային ժողովի առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արսեն Թորոսյանի գործուղման ճանապարհածախսի ընդհանուր գումարը կազմել է 586 հազար դրամ»,- նշված է հարցման մեջ: Բայց ԱՄՆ ավիատոմսը միայն մոտավորապես 400 հազար ՀՀ դրամ է, հարց է առաջանում՝ որտեղ է գիշերել Թորոսյանը 186 հազար դրամով, ինչով է սնվել այդ դեպքում:

Փաշինյանի հրապարակումներից հասկանում ենք, որ Աննա Հակոբյանն ուղեկցել է նրան, սակայն պատվիրակության կազմում Հակոբյանի անունը բացակայում էր:

«Ժողովուրդ» օրաթերթի հարցմանն ի պատասխան՝ վարչապետի աշխատակազմից փոխանցել էին, որ Աննա Հակոբյանի՝ ԱՄՆ մեկնելու ծախսերը կատարվել են անձնական միջոցների հաշվին:

Կարճ ասած, Փաշինյանն ու իր թիմակիցները սկսել են պաշտոնապես քիչ ցույց տալ իրենց ծախսերը, որոնք ակնհայտորեն ավելի շատ են, քան պաշտոնական պատասխաններում արտացոլվածը:

«Ժողովուրդ» օրաթերթի խմբագրությունը պարբերաբար ահազանգեր է ստանում, որ առաջիկայում նախատեսվում է իրականացնել սահմանագծում եւ սահմանազատում Հայաստանի, Վրաստանի եւ Ադրբեջանի սահմանների հատման կետից, սակայն զինծառայողների ծնողների ահազանգի համաձայն՝ այդ գործընթացում ներգրավվելու են նաեւ ՀՀ զինված ուժերը: «Ժողովուրդ» օրաթերթը հարցմամբ դիմել էր փոխվարչապետ Միհեր Գրիգորյանի գրասենյակ հասկանալու համար, թե ճիշտ են արդյոք նման տեղեկությունները: Ստացել էինք հետեւյալ պատասխանը. «Հայտնում ենք, որ հարցման մեջ նշված տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը: Համաձայն գործող Կանոնակարգի 1-ին եւ 2-րդ հոդվածների 2-րդ մասերի, 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ սահմանազատման աշխատանքները եւ համալիր միջոցառումները իրականացվում են բացառապես հանձնաժողովների, փորձագիտական խմբերի, ինչպես նաեւ աշխատանքներում ներգրավվող փորձագետների եւ մասնագետների կողմից»,- ասված է պատասխանում: Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկություններ ուներ, որ հայտնի սահմանազատումը սկսվելու է Գեղարքունիքի մարզից՝ Ճամբարակ եւ Սոթք համայնքներից:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանն իր վարքով չի դադարում զարմացնել ոչ միայն հասարակ քաղաքացիներին, այլեւ մասնագետներին՝ հոգեբաններին: Հոգեբան Միհրդատ Մադաթյանը «Ժողովուրդ» օրաթերթին փոխանցեց, որ ուսումնասիրելով, հոգեվերլուծության ենթարկելով Ալեն Սիմոնյանի հրապարակումները, գրառումները, նկատել է, որ երբեմնի դերասանն անձնային աճ չի ապրել եւ մնացել է իր չստացված դերասանի կարգավիճակում: Հարկ է նշել, որ Ալեն Սիմոնյանը հասարակության լայն շերտերում տպավորված է, սակայն ոչ լավ վարքագծով: Բանն այն է, որ ԱԺ նախագահին հիշում են այն դեպքով, երբ վերջինս թքել է քաղաքացու վրա: Իսկ ի՞նչ բացատրություն ունի հոգեբանական տեսանկյունից մարդու վրա թքելը. հոգեբանի խոսքով՝ Սիմոնյանն իրեն փղի հետ է համեմատում, սակայն ավելի լավ կլիներ, որ համեմատեր ուղտի հետ: Հոգեբանն ընդգծել է, որ կենդանուն՝ ուղտին, թքելու համար ոչ ոք չի պատժում, եւ Ալեն Սիմոնյանի դեպքում եւս այդպես է, ոչ ոք չպատժեց նրան: Հարկ է նշել, որ Մադաթյանը կարծում է, թե Վահագն Ալեքսանյանն ավելի շատ տեքստուրա ունեցող կերպար է, քան Ալեն Սիմոնյանը, եւ վերջինիս դեմ ոչ ոք չի պայքարում՝ եղած-չեղած մի հաշիվ է: Հետաքրքիրն այն է, որ հոգեբանը նշում է՝ Սիմոնյանն իրեն դրել է Դոն Կորլեոնեի տեղը, ինչը կարող է անգամ նորածինն անել՝ ԱԺ աթոռին նստելով: Մեր զրուցակիցը հիշեց, որ Ալեն Սիմոնյանն իր հոր գերեզմանն է վաճառել, սերիալներում երրորդական դերեր է կատարել... կարճ ասած՝ աճ չի ապրել, նույն տեղում է:

Սահմանադրական դատարանի նախագահ Արմեն Դիլանյանը ջանում է ՔՊ-ական պատգամավոր Վլադիմիր Վարդանյանին տանել ՍԴ: ArmLur.am-ը ավելի վաղ հայտնել էր, որ ՍԴ դատավոր Վահե Գրիգորյանն ընտրվել է ՄԻԵԴ-ի դատավոր: Նրա տեղը ՍԴ-ում մնում է թափուր: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՍԴ նախագահ Արմեն Դիլանյանը մտադիր է ՔՊ-ական պատգամավոր Վլադիմիր Վարդանյանին ՍԴ տանել որպես դատավոր: Այս մասին Դիլանյանը հասցրել է նաեւ Նիկոլ Փաշինյանին, ու հիմա սպասում են նրա համաձայնությանը, բայց Փաշինյանը դեռ ոչ մի կերպ չի արձագանքել: Նա երկմտում է, քանի որ ԱԺ պետահիրավական հարցերի հանձնաժողովի նախագահի պաշտոնը դատարկ կմնա, իսկ ՔՊ-ի ներսում չկա համապատասխան գիտելիքներով ու փորձով մեկը, ում կնշանակեն այդ պաշտոնին: Արմեն Դիլանյանը մտերիմ շրջապատում հայտարարել է, որ Վլադիմիր Վարդանյանն իշխանության ներկայացուցիչ է, բացի դրանից փորձ ունի ոլորտում, ծանոթ է Սահմանադրական դատարանի անցուդարձին, տարբեր տարիների պաշտոններ է զբաղեցրել ՍԴ-ում, ուստի, ըստ Դիլանյանի, Վլադիմիր Վարդանյանը լավագույն կադրն է: «Ժողովուրդ» օրաթերթը դիմել է ՍԴ Հանրային կապերի բաժին՝ տեղեկությունը ճշտելու, որտեղից էլ փոխանցեցին. «Ի պատասխան Ձեր հարցման՝ տեղեկացնում ենք. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասով Սահմանադրական դատարանի դատավորի թափուր տեղի համար թեկնածուների առաջադրումներ կատարում են հաջորդաբար Հանրապետության նախագահը, դատավորների ընդհանուր ժողովը եւ Կառավարությունը»:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ՏՈՒԳԱՆՔՆԵՐ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐ ԿԼԻՆԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Երեւանի ավագանու «Քաղաքացիական ղեկավարում» խմբակցության անդամ Լեւոն Լեւոնյանի հետ: Նա նշել է, որ մարտ-ապրիլ ամիսներից կգործարկվի նախագիծ, որով վարչական պատասխանատվության կենթարկվեն տրանսպորտի համար չվճարած քաղաքացիները: Լեւոն Լեւոնյանն անդրադարձել է նաեւ Կենտրոն վարչական շրջանի նախկին ղեկավար Վիկտոր Մնացականյանի առաջարկին՝ Երեւանում տրանսպորտը դարձնել անվճար:

-Պարոն Լեւոնյան, քաղաքացիներն ահազանգում են, որ վարորդները իջեցնում են այն ուղեւորներին, որոնք չեն վճարում տրանսպորտ բարձրանալիս եւ բոյկոտում են թանկացած սակագնի դեմ: Դեպքեր են լինում, երբ վարորդներն իրենք չեն վարում ավտոբուսները, իջնում են, եւ ունենում ենք իրավիճակ, որ իրենց իրավասությունների մեջ չմտնող հսկիչի դեր են կատարում: Քաղաքապետարանից նման հրահանգ կա՞ վարորդներին:

-Նախ տարանջատենք այս երկու ֆունկցիաներն իրարից. վարորդի ֆունկցիաներն այլ են, հսկիչի ֆունկցիաները՝ այլ: Վարորդի աշխատանքային պայմանագրի մեջ նաեւ ամրագրված կետ կա, որտեղ նշված է, որ վարորդը պետք է հետեւի եւ վերահսկի ուղեւորների կողմից պատշաճ եւ բնականոն վճարումների կատարումը: Այսինքն, եթե ուղեւորները չեն վճարում, ապա վարորդի աշխատանքի շրջանակում է դա վերահսկելը, կանխելը կամ միջամտելը. այս կետն առկա է աշխատանքային պայմանագրում: Իսկ հսկիչի ֆունկցիան արդեն այլ է. այն ընդհանուր հասարակական կարգի պահպանման համար է: Ջանցանք տեսնելիս հսկիչը պետք է վարչական իրավախախտում կազմի:

-Պարոն Լեւոնյան, հասկանալի է, որ վարորդի գործառույթների մեջ է մտնում նախազգուշացնելը, բայց դա չի նշանակում, որ նա պետք է իր գործառույթը չկատարի եւ երթուղին չվարի: Այսինքն՝ չպետք է իջնի մեքենայից եւ ասի՝ ես այլեւս չեմ վարում: Սա ինչպե՞ս կմեկնաբանեք:

-Դուք այդպես եք մեկնաբանում, սակայն կրկնում եմ՝ վարորդի աշխատանքային պարտավորությունների մեջ հստակորեն մտնում է ուղեւորների կողմից վճարումների ապահովումը կամ այդ վճարումների գործընթացը հսկելը: Եթե ուղեւորը չի վճարում, բոյկոտ է անում, վարորդը, քանի որ դա իր անմիջական պատասխանատվության ներքո է, որոշակի քայլեր է ձեռնարկում: Ես չեմ ասում, որ նա պետք է վարչական իրավախախտում, արձանագրություն կազմի:

-Բայց նա իրավունք չունի մեքենայից իջեցնելու ուղեւորին:

-Եթե տվյալ աշխատանքային կետով այդ թերացումն իր մոտ արձանագրվի, ապա հետագայում կարող է ծառայողական քննութուն բացվել, եւ վարորդը պատասխանատվության առաջ կանգնի:

-Պարոն Լեւոնյան, հստակեցնենք. քաղաքապետարանից կա՞ հրահանգ վարորդներին, որ չշարունակեն երթուղին, մինչեւ քաղաքացիները չվճարեն:

-Նորից եմ կրկնում՝ դա հրահանգ չէ. վարորդ կա, որ այդ կերպ է այդ գործընթացն իրականացնում կամ այլ կերպ է մեկնաբանում, ամեն մեկը տարբեր ձեւով է դա անում: Մարդ կա, հակափաստում է, ասում է՝ քո բոյկոտն այլ տեղ իրականացրու, կամ ձեւը փոխիր եւ այլն: Նմանատիպ հրահանգ ուղիղ չի իջեցվել, դրանք աշխատանքային պայմանագրով ստանձնված պարտավորություններ են, որի մասին հայտարարել է նաեւ քաղաքապետը:

-Նախօրեին քաղաքապետն ասաց, որ բոլոր այն քաղաքացիները, որոնք բոյկոտում են, չեն վճարում նրանց նկատմամբ միջոցներ պետք է կիրառվեն: Այսինքն, ի՞նչ է սա նշանակում: Ի՞նչ միջոցների մասին է խոսքը: Հնարավո՞ր է, որ բոյկոտող քաղաքացիների հանդեպ վարչական միջոցներ կիրառվեն:

-Այս պահին որեւէ նորմատիվ իրավական ակտերով նմանատիպ խնդիրները չեն կարգավորվում: Միակ կետը, որն օրենքի մասով կարող է փակել այդ բացը կամ խնդիրը լուծել, հասարակական կարգի խանգարումն է: Այդ բոյկոտների ժամանակ պատահել են դեպքեր, երբ միջանձնային լարված փոխհարաբերություններ, վեճեր, թեժ զրույցներ, մինչեւ իսկ վիրավորանքներ են եղել, որոնք նման կերպով կարող են կանխվել: Այս պահին շրջանառվում է Երեւանի «ՏԻՄ-ի մասին» օրենքի նոր նախագիծը, որ գերատեսչություններում կարծիքի է ուղարկված, շուտով կներկայացվի օրենսդիր մարմնում, եւ Ազգային ժողովում օրենքը կընդունվի. արդեն նոր օրենքով տրանսպորտի համար նախատեսված գումարը չվճարելու դեպքերում կկազմվեն վարչական իրավախախտումներ:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

ԻՆՉ ՈՒՆԵՑՎԱԾՔՈՎ ՊԵՏԸ ՀԵՌԱՑԱՎ

Ազատման դիմում գրած Արման Ցոլակյանը պետական աշխատանքային կարիերայում հասցրել է ձեռք բերել 1 ավտոտնակ:

Համաձայն նրա 2024 թվականի հաշվետու տարվա եկամուտների, անշարժ գույքի, ծախսերի եւ շահերի հայտարարագրի՝ ավտոտնակը Ցոլակյանը 2024 թվականին նվիրատվություն է ստացել հորից՝ Վարդգես Հովսեփի Ցոլակյանից, իսկ որպես անշարժ բնակելի գույք Ցոլակյանը շահագործում է Երեւանի բնակարանը, որը սեփականության իրավունքով իրեն չի պատկանում:

Բանկային հաշիվների մնացորդները կազմել են 401 ԱՄՆ դոլար եւ 636 հազար 400 դրամ, իսկ կանխիկ դրամական միջոցները կազմել են 32 հազար ԱՄՆ դոլար, 6 հազար եվրո, 8 մլն դրամ: Արման Ցոլակյանը 1996 թվականից մինչեւ վերջերս աշխատել է ներքին գործերի նախարարությունում տարբեր ուղղություններով: 2010-2014 թվականներին եղել է ՀՀ ԱԻՆ ՓԾ օպերատիվ կառավարման վարչության պետ, ապա 2014-2017 թվականներին՝ ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության տնօրենի տեղակալ:

Դատական դեպարտամենտի ղեկավարի տեղակալ, դատական կարգադրիչների ծառայության պետի պաշտոնից փետրվարի 17-ին սեփական դիմումի համաձայն հեռացած Ցոլակյանը 2024 թվականի ընթացքում ՀՀ ԲՈՒՀ աշխատակազմի դատական դեպարտամենտից ստացել է 8 մլն 755 հազար դրամ աշխատանքի վարձատրություն: Նրա եկամուտները հաշվետու տարում կազմել են 11 մլն 134 հազար դրամ, որից 2 մլն 220 հազարը կենսաթոշակ է ներքին գործերի նախարարությունից, իսկ 159 հազար դրամը քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից ստացված եկամուտ է Արդարադատության ակադեմիայից:

Արման Ցոլակյանը չի պատճառաբանել, թե որն է եղել ազատման պատճառը:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ

ArmLur.am-ը հայտնել էր, որ ՔՊ-ից սկանդալային կերպով հեռացված պատգամավոր Հովիկ Աղազարյանը մտադիր է Նիկոլ Փաշինյանի պաշտոնանկության գործընթաց սկսել ԱԺ-ում:

Պատգամավորը ArmLur.am-ի հետ զրույցում չի էլ հերքում սա, միայն նշում է, թե իր առաջիկա ծրագրերի մասին չի ցանկանում խոսել: Հավելենք՝ որպեսզի ԱԺ-ում վարչապետի հրաժարականի գործընթացը մտնի շրջանառության մեջ, անհրաժեշտ է պատգամավորների 1/3-ի քվեն՝ 36 ստորագրություն: Խորհրդարանում բուն պաշտոնանկության համար անհրաժեշտ է 50+1% ձայն, այսինքն՝ 54 պատգամավորի ձայն: ArmLur.am-ը ընդդիմադիր «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանից հետաքրքրվել է՝ եթե Հովիկ Աղազարյանը նման գործընթաց սկսի, կմիանա՞ն նրանք նախաձեռնությանը:

Սեյրան Օհանյանն էլ արձագանքել է, որ երբ հստակ տեղեկություն լինի իմպիչմենթի գործընթացի մասին, իրենց ֆրակցիան կքննարկի եւ որոշում կկայացնի:

«Պատիվ ունեմ» խմբակցության ղեկավար Հայկ Մամիջանյանն էլ արձագանքել է, որ «ապրիլիմեկյան կատակների համար դեռ շուտ է»:

ԼԱՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Ռուս-ուկրաինական հակամարտությանը վերջ տալու Վաշինգտոնի ջանքերի շրջանակներում Ուկրաինայի եւ Ռուսաստանի հարցով ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի հատուկ բանագնաց Քիթ Քելոգը փետրվարի 19-ին ժամանել է Կիեւ: Ժամանելուց հետո ամերիկացի պաշտոնյան հայտնել է, որ իր առաքելությունը հիմնականում Ուկրաինայի մտահոգությունները «լսելը» եւ իր բացահայտումները Սպիտակ տանը փոխանցելն է:

«Մենք հասկանում ենք անվտանգության երաշխիքների անհրաժեշտությունը: Մենք հասկանում ենք այս ազգի ինքնիշխանության կարեւորությունը»,- ասել է Քելոգը:

Նա նաեւ հավելել է, որ իր այցը «պոտենցիալ լավ բանակցություններ ունենալու հնարավորություն է»: Ավելի վաղ Ուկրաինայի նախագահ Վոլոդիմիր Զելենսկին առաջարկել էր, որ Քելոգի եռօրյա այցը ներառի առաջնագծի ստուգում, սակայն դա պաշտոնապես չի հաստատվել բանագնացի կողմից: Նախատեսվում է, որ այցի ընթացքում Քելոգը հանդիպումներ կունենա նախագահ Վոլոդիմիր Զելենսկիի, Ուկրաինայի պաշտպանության նախարար Ռուստեմ Ումերովի, Ուկրաինայի զինված ուժերի գլխավոր հրամանատար Ալեքսանդր Սիրսկիի հետ: Քելոգը Կիեւ է այցելել անմիջապես այն բանից հետո, երբ ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի պատվիրակությունները Սաուդյան Արաբիայում ռուս-ուկրաինական հակամարտության ավարտի շուրջ բանակցություններ են վարել՝ առանց Ուկրաինայի մասնակցության: Նախագահ Վոլոդիմիր Զելենսկին ընդգծել է, որ Ուկրաինան չի ընդունի իր թիկունքում իրականացվող բանակցությունների արդյունքները:

ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ԵԱՏՄ անդամ չհանդիսացող պետությունում գրանցված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցներն ինչպես օտարերկրյա, այնպես էլ ԵԱՏՄ ֆիզիկական անձինք ԵԱՏՄ մաքսային տարածք, այս դեպքում՝ Հայաստան կարող են ժամանակավոր ներմուծել ոչ ավելի, քան 1 տարի ժամկետով:

Այս դեպքում ներմուծման համար առաջանում է մաքսատուրքերի եւ հարկերի վճարման պարտավորության ապահովման պարտադիր պահանջ՝ դրամական միջոցներով:

Հայաստանի կամ ԵԱՏՄ անդամ այլ երկրների ֆիզիկական անձինք մաքսատուրքերի եւ հարկերի վճարման պարտավորությունը պետք է ապահովեն միշտ, իսկ օտարերկրյա անձինք՝ միայն այն դեպքում, երբ նախկինում Հայաստան ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները դեռ չարտահանած՝ ներմուծում են երկրորդ եւ հաջորդ տրանսպորտային միջոցները:

400 ԲԵՌՆԱՏԱՐ ԱՆՑԱԿԵՏՈՒՄ Է

Ավելի քան 400 հայկական բեռնատար մնացել է ռուս-վրացական սահմանի Հյուսիսային Օսեթիայի Վերին Լարս անցակետում: Այս մասին են վկայում Հյուսիսային Օսեթիայի ճանապարհային երթեւեկության կազմակերպման կենտրոնի տվյալները:

Երեկվա տվյալներով՝ հերթում են 423 հայկական բեռնատարներ: Ընդհանուր առմամբ, վերջին տվյալներով, հերթում գրանցվել է 1555 բեռնատար տարբեր երկրներից:

Մցխեթա-Ստեփանծմինդա-Լարս միջազգային նշանակության ավտոճանապարհի Գուդաուրի-Կոբի հատվածում Լարսի ճանապարհը փակ է կիրակի գիշերվանից՝ Վրաստանի տարածքում եղանակային պայմանների վատթարացման պատճառով: Հյուսիսային Օսեթիայում այդ պատճառով արտակարգ դրություն է հայտարարվել:

ԲԵՆԶԱԼՑԱԿԱՅԱՆԸ ԿԱՊԱՐԱԿՆՔԵԼ ԵՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավար Գարեգին Խաչատրյանի հանձնարարագրի հիման վրա Տեսչական մարմնի Սյունիքի տարածքային ստորաբաժանման մասնագետների կողմից հրդեհատեխնիկական հետազոտություն է իրականացվել Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Սառնակունք գյուղի 6-րդ փողոցի 9/1 հասցեում շահագործվող եւ արտադրական վտանգավոր օբյեկտ (ԱՎՕ) հանդիսացող բենզալցակայանի նկատմամբ:

Հետազոտության արդյունքում Տեսչական մարմնի մասնագետները արձանագրել են հրդեհային եւ տեխնիկական նորմատիվ փաստաթղթերի պահանջների խախտումներ, որոնք անմիջական եւ ուղղակի սպառնալիք են ստեղծում հրդեհների առաջացման, ինչպես նաեւ մարդկանց կյանքի, առողջության ու անվտանգության համար:

ԱՅՍՕՐ

ՄԵԾ ՀԱՆՐԱՀԱՎԱՔ ԿԻՐԱԿԱՆԱՑՎԻ

Ազատության հրապարակում «Միասին» այլընտրանքային հասարակական-քաղաքական շարժումը նախաձեռնել է իրականացնել հանրահավաք: Այս մասին հայտարարել է շարժման համակարգող խորհուրդը:

Հայտարարության մեջ նշված է. «Փետրվարի 20-ին լրանում է հայոց ինքնության վերելքի՝ Արցախյան ազգային-ազատագրական պայքարի 37 ամյակը: 37 տարի առաջ միահամուռ ոտքի կանգնելով՝ մենք ոգեկոչեցինք Արցախի եւ Հայաստանի վերամիավորման, մեր տարածաշրջանում ազգային հզոր եւ խաղաղություն հարգող պետության ստեղծման կամքը, որից հետո կայացրինք առաջին Արցախյան պատերազմի հաղթանակը, Արցախի Հանրապետության հռչակումը՝ ազգերի ինքնորոշման սկզբունքի կայացումը, Ադրբեջանին պարտադրեցինք հրադադար: Հաջողությունը երկնուստ մերն էր, բայց շեղվեցինք այդ կամքից, որի հետեւանքը 2020թ. պատերազմի դառը պարտությունն էր, ՀՀ սահմանների փոփոխությունը, 2023թ. Ադրբեջանի ցեղասպանական գործողությունը, որի հետեւանքը Արցախի հայաթափումն էր: Կորուստը ջախջախիչ չէ եւ հաղթահարելու միակ ճանապարհը փետրվարի 20-ին նոր համախմբումն է, նոր հաղթանակների կանխորոշումը»:

Սպասվող հանրահավաքի վերաբերյալ ArmLur.am-ը զրուցել է «Դեմոկրատական կուսակցության» ղեկավար, «Միասին» այլընտրանքային հասարակական-քաղաքական շարժման համակարգող Արամ Սարգսյանի հետ:

Քաղաքական գործիչը ArmLur.am-ի հետ զրույցում նշել է, որ իրենք հանրահավաքին մասնակցելու հրավեր են ուղարկել բոլոր ընդդիմադիր քաղաքական ուժերին, եւ նրանց մի մասը արդեն հաստատել են իրենց մասնակցությունը Ազատության հրապարակի հանրահավաքին. հրապարակում նաեւ ներկա են լինելու արցախահայության ներկայացուցիչները: Սարգսյանը հատկապես կարեւորել է նրանց մասնակցությունը՝ օրվա խորհրդով պայմանավորված: Նա նշեց, որ հանրահավաքում անպայման քննարկվելու են Արցախյան հիմնահարցի վերաբերյալ շատ հարցեր, մասնավորապես Հանրահավաքի անունից դիմելու են Մինսկի խմբի եռանախագահներին:

Ըստ ArmLur.am-ի զրուցակցի՝ այսօր հնարավորություն է ստեղծվում վերականգնել Մինսկի խմբի համանախագահության ֆորմատը՝ հաշվի առնելով Թրամփի եւ Պուտինի միջեւ արդեն սկսված երկխոսությունը: Ըստ Սարգսյանի՝ «Մինսկի խմբի գործունեությունը մեզ համար կարեւորագույն գործոն է»:

Հանրահավաքի կազմակերպիչները նաեւ պահանջելու են «չեղարկել Նիկոլ Փաշինյանի հայտարարությունը, որ Արցախը Ադրբեջանի մաս է»: Հանրահավաքի ընթացքում կքննարկեն նաեւ Արամ Սարգսյանի գնահատմամբ սոցիալական եւ տնտեսական բարդագույն խնդիրները, որ հիմա առաջացել են Հայաստանում:

«Դեմոկրատական կուսակցության» ղեկավարը տեղեկացրել է նաեւ, որ հանրահավաքին մասնակցություն կունենա «Սրբազան շարժման» հիմնադիր Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանը, ով աղոթքով կսկսի հանրահավաքը եւ կունենա ելույթ:

Ըստ Արամ Սարգսյանի՝ իրենք պայքարող կառույց են, «շախմատում մեկ քայլանոց մատ չի լինում», եւ իրենք պետք է շարունակեն՝ մինչեւ հասնեն իրենց առջեւ դրված նպատակներին: Սարգսյանի դիտարկմամբ այսօր ժողովուրդը քաղաքական առաջնորդների կարիք ունի:

«Առաջնորդներ ունենալու պարագայում կարող ենք նորից համախմբվել, ուստի մենք այս առաջարկը անում ենք բոլորին՝ միասին լուծելու այս հարցը»,- նշել է Սարգսյանը եւ կարեւորել, որ իշխանափոխությունը լինի լեգիտիմ ճանապարհով: «Եթե մենք հասնում ենք մեր նպատակին, ապա նոր ձեւավորվող իշխանությունը պետք է լինի լեգիտիմ», - շեշտել է նա:

Հիշեցնենք, որ փետրվարի 18-ին Ազատության հրապարակում հանրահավաք էր նախաձեռնել նաեւ ԱԻՄ առաջնորդ Պարույր Հայրիկյանը:

Արամ Սարգսյանին հարցրինք նաեւ, թե հնարավո՞ր է՝ միասնական հանդես գան, ինչին նա պատասխանեց. «Բոլոր ընդդիմադիր ուժերը, որոնք համարում են, որ այսօրվա կարեւոր հարցը այս իշխանությունից օր առաջ ազատվելն է, կարող են իրենց լուման ունենալ այս պայքարի մեջ: Մենք որեւէ մեկին չենք կարող մերժել»: Սակայն Հայրիկյանը քիչ հավանական համարեց, որ Հայրիկյանի հետ միասնական հարթակից հանդես գան: Հանրահավաքին ներկա կլինեն նաեւ բոլոր խորհրդարանական ընդդիմադիր ուժերը:

ԱՐՄԵՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԻ ԹԻՎԸ

2025 թ. հունվարին Հայաստան այցելել է 139.482 զբոսաշրջիկ: Նախորդող տարում՝ 2024 թվականին, զբոսաշրջային այցելությունների թիվը հունվարին կազմել է 154.319: 2025 թ. հունվար ամսին դեպի Հայաստան առավել շատ զբոսաշրջային այցելություններ գրանցվել են Ռուսաստանից (39.5 %), Վրաստանից (13%) եւ Իրանից (9.4%):

ԽԱՌՆԱՇՓՈԹ՝ ԵՐԹՈՒՂԱՅԻՆՈՒՄ

ArmLur.am-ի տեղեկություններով՝ երեկ թիվ 3 երթուղայինի մեջ խառնաշփոթ իրավիճակ է եղել: ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ անհայտ անձը դանակի սպառնալիքով երթուղայինում գտնվող 17 տարեկան երեխայից պահանջել է 20.000 դրամ, այնուհետեւ Սեբաստիայի 2 հասցեի հարակից կանգառում ստիպողաբար իջեցրել է երթուղայինից եւ տարել Հասրաթյան 4/9 հասցեում գործող «Ուրարտու» հանրախանութի հարակից հատված ու կրկին պահանջել գումար: Սակայն, մերժում ստանալուց հետո, կպչուն ժապավենով փակել է երեխայի բերանը, որից հետո պատահական անցորդի մոտենալու հետեւանքով դիմել է փախուստի: Դեպքն ուսումնասիրում են իրավապահները:

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ իրավապահները պարզել են, որ այդ արարքը կատարել է Ա. Պ.-ն: Ձեռնարկվում են միջոցառումներ նրան հայտնաբերելու ուղղությամբ:

ԵՎՍ ՄԵԿ ԱՆՁ

Փետրվարի 5-ին Մերձավանում հնչած կրակոցների գործով եւս մեկ անձ կալանավորվել էր: ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ կալանավորվածը Մերձավանում կրակոցներից առաջ ծեծի ենթարկված Վոլոդյա Խդրյանն է: Մերձավանցիները պատմել էին, որ մինչ աղմկահարույց կրակոցները համայնքում ծեծկռտուք էր եղել, ու ծեծել էին Վոլոդյա Խդրյանին ու նրա հորը: Արդյունքում, համայնքում այնքան էր գյուղի տղաների մեջ վեճը թեժացել, որ հնչեց կրակոց ու սպանվեց համայնքի ղեկավարի հորաքրոջ որդին: Միջադեպի արդյունքում այս կալանավորվածների թիվը հասել է 7-ի, եւ 3 անձի նկատմամբ հայտարարվել է հետախուզում: Հետախուզվողներից մեկը Ռուզաննա Ղազարյանի որդին է՝ Արմեն Ղազարյանը, որի մայրը կոչով դիմում է մերձավանցիներին չվախենալ ոտքի կանգնել, որ իրենց երեխաների կյանքը չկործանվի: Այս միջադեպից հետո աղմկահարույց տեսանյութ էր հրապարակվել, թե ինչպես է համայնքի ղեկավար Միհեր Ախտոյանը, իր տանը գտնվելով, հետեւում կռվի ընթացքին ու որեւէ կանխարգելիչ գործողություններ չի իրականացնում: Ավելին՝ ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ որոշում է կայացվել Արմավիրի քննչական բաժնից քրեական գործը տեղափոխել Երեւան ու այն քննել Հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչությունում:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ԳՅՈՒՄՐԻՆ ՈՒ ՍՊԱՍՎՈՂ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երեկ Քննչական կոմիտեն հայտնել էր, որ Գյումրի համայնքի նախկին ղեկավարը, Սեւ Բերդ ամրոցի շենքը եւ 0.79 հա հողատարածքը ձեռք բերելուց հետո, նպատակադրվել է պետական սեփականություն հանդիսացող ամրոցի շրջակա տարածքները դարձնել իր ընտանիքի սեփականությունը: ArmLur.am-ին հայտնի է դարձել, որ խոսքը Գյումրու նախկին քաղաքապետ Սամվել Բալասանյանի մասին է: Իսկ ինչո՞ւ է հիմա իրավապահ համակարգը հիշել Սամվել Բալասանյանին: Հիշեցնենք, թե ինչ տեղի ունեցավ Գյումրիում:

ArmLur.am-ը նախկինում գրել էր, որ 2023 թվականին «Քաղաքացիական պայմանագիր»-ը միակողմանիորեն խզեց «Բալասանյան դաշինք» սոցիալական կուսակցության հետ երկու տարի առաջ ստորագրած համագործակցության մասին հուշագիրը, որից հետո Սամվել Բալասանյանի որդուն տարան կալանքի: Իսկ հիմա էլ նախկին քաղաքապետ Սամվել Բալասանյանի քրեական գործերն են հիշել: Թե ինչ միտում ունեն քաղաքական իշխանությունները, Գյումրու ընտրությունների շեմին Բալասանյանների նկատմամբ քրեական գործեր հարուցելով, ցույց կտա ժամանակը:

Նշենք, որ Սամվել Բալասանյանը ներկայումս ԱՄՆ-ում է եւ ունի լուրջ առողջական խնդիրներ:

Հավելենք, որ ՀՀ քննչական կոմիտեն տեղեկացնում է. «Համայնքի նախկին ղեկավարը 20,28 հա հողամասը տարանջատել է 2 առանձին միավորների եւ տրամադրել 2 նոր՝ 19,28 հա մակերեսով Ղարսի խճուղի 2/7 եւ 1 հա մակերեսով Ղարսի խճուղի 2/8 հասցեներ, որոնց նկատմամբ գրանցվել է Պաշտպանության նախարարության անհատույց օգտագործման իրավունքը, տրվել իրավունքի վկայականներ, որոնցում այդ հողերի նպատակային նշանակությունը նշվել է բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման՝ այն դեպքում, երբ Կառավարության որոշմամբ դրանցում ընդգրկված 4 հա հողատարածքը հանդիսացել է հատուկ պահպանվող տարածքների հող:

2015 թվականի փետրվարի 9-ին Գյումրի քաղաքի 1 հա մակերեսով պատմության եւ մշակութային արժեք ներկայացնող հատուկ պահպանվող տարածքի հողը Պաշտպանության նախարարության կողմից ուղղակի վաճառքով՝ 13 մլն ՀՀ դրամով ապօրինի օտարվել է համայնքի նախկին ղեկավարի որդուն պատկանող ընկերության աշխատակից եւ մեկ այլ ընկերության գործադիր մարմնի ղեկավար Ս.Ջ.-ին:

Այնուհետեւ, համայնքի նախկին ղեկավարի տեղակալի կողմից տրված կեղծ տեղեկանքի հիման վրա նշված գույքի նկատմամբ գրանցվել է իր հետ փոխկապակցված անձի սեփականության իրավունքը, ինչով էական վնաս է պատճառվել պետության օրինական շահերին՝ անզգուշությամբ առաջացնելով ծանր հետեւանքներ: Ավելին, ապօրինի կերպով տարանջատված եւ օտարված հատուկ պահպանվող տարածքների հողի վրա հետագայում իրականացվել են կառուցապատման աշխատանքներ, որի հետեւանքով հատուկ պահպանվող տարածքների հողը փաստացի դադարել է գոյություն ունենալուց, իսկ պետությունը զրկվել է այն տնօրինելու հնարավորությունից:

Գյումրի համայնքի նախկին ղեկավարի որդին մի խումբ անձանց հետ նախնական համաձայնությամբ 1 հա մակերեսով հողի իրական բնույթը, դրա ծագման աղբյուրը թաքցնելու եւ խեղաթյուրելու, ինչպես նաեւ հիշյալ գույքը լեգիտիմացնելու նպատակով Ս.Ջ.-ի հետ կնքել է հողամասի առուվաճառքի պայմանագիր՝ դրանում անշարժ գույքի օտարման գինը նշելով 4 մլն 900 հզր ՀՀ դրամ: Հանցավոր ճանապարհով ստացված անշարժ գույքը Ս.Ջ.-ի կողմից փոխանցվել է համայնքի ղեկավարի որդուն, որի արդյունքում գրանցվել է վերջինիս սեփականության իրավունքը եւ տրվել իրավունքի պետական գրանցման վկայական: Բացի այդ, Գյումրի համայնքի նախկին ղեկավարը նպատակադրվել է Սեւ Բերդ ամրոցի հարակից հողատարածքի մի հատվածը եւս դարձնել իր ընտանիքի սեփականությունը:

Արդյունքում, Ղարսի խճուղի 2/7 հասցեում գտնվող հողտարածքի նկատմամբ դադարեցվել է պաշտպանության նախարարության անհատույց օգտագործման իրավունքը, այն հետ է վերցվել նախարարությունից եւ նշված հասցեում գտնվող 19,28 հա հողի նկատմամբ գրանցվել է Գյումրի համայնքի սեփականության իրավունքը:

Այնուհետեւ, համայնքի նախկին ղեկավարը նշված տարածքը բաժանել է 4 առանձին միավորների եւ Ղարսի խճուղի 2/9 հասցեում գտնվող հատուկ պահպանվող տարածքների 1,17236 հա մակերեսով հողը ձեւական աճուրդի միջոցով՝ 15 մլն 387 հզր 750 հզր ՀՀ դրամով օտարել է Ս.Մ.-ին, որից հետո համայնքի նախկին ղեկավարի որդին՝ հոր եւ Ս.Մ.-ի հետ նախնական համաձայնությամբ, հիշյալ հողի իրական բնույթը թաքցնելու նպատակով Ս.Մ.-ի հետ կնքել է հողամասի առուվաճառքի պայմանագիր՝ դրանում անշարժ գույքի օտարման գինը նշելով 16 մլն ՀՀ դրամ: Համայնքի նախկին ղեկավարի որդու (2 դրվագ), Ս.Ջ.-ի եւ Ս.Մ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով (փողերի լվացումը), համայնքի նախկին ղեկավարի տեղակալի նկատմամբ՝ 445-րդ հոդվածի 1-ին մասով (պաշտոնեական կեղծիքը) եւ 46-441-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով (պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելուն կամ լիազորություններն անցնելուն օժանդակելը): Համայնքի նախկին ղեկավարի որդու եւ Ս.Ջ.-ի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է տնային կալանքը, Ս.Մ.-ի նկատմամբ՝ վարչական հսկողությունը, իսկ համայնքի նախկին ղեկավարի տեղակալի նկատմամբ՝ բացակայելու արգելքը:

Վերջիններիս վերաբերյալ քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ ըստ էության քննության առնելու համար դատարան ուղարկելու միջնորդությամբ: Հանրային քրեական հետապնդում է հարուցվել Գյումրի համայնքի նախկին ղեկավարի նկատմամբ՝ Քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով (պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը) (2 դրվագ) եւ 296-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով (փողերի լվացումը) (2 դրվագ): Վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը եւ հայտարարվել է հետախուզում»,- նշված է հաղորդագրության մեջ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԹՈՐՈՍՅԱՆԻ ԱՐՏԱՀԱՆՁՆՄԱՆ ԳՈՐԾԸ

Հելսինկյան խաղաղապահական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը 2025 թվականի փետրվարի 18-ին հայտարարություն էր տարածել, ի թիվս այլնի՝ նշելով, որ Հայաստանի Հանրապետությունը պատրաստվում է արտահանձնել ազգությամբ հայ Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Էմիլ Թորոսյանին. «Նախորդ շաբաթ քաղաքացին դիմել էր Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայություն՝ աղաստան հայցելու խնդրանքով:

ՀՀ դատախազությունը, չսպասելով Միգրացիոն ծառայություն դիմումի հասնելուն եւ դրա վերաբերյալ վարույթի հարուցմանը, որոշում է կայացրել արտահանձնել է. Թորոսյանին, ինչը կհանգեցնի նրա՝ Մարդու հիմնարար իրավունքների եւ ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքների կոպտագույն խախտմանը»:

Ի պատասխան այս հրապարակման՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը հայտարարում է, որ Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Էմիլ Թորոսյանը Հայաստանի Հանրապետությունում ապաստան կամ փախստականի կարգավիճակ հայցելու նպատակով ներքին գործերի նախարարության միգրացիայի եւ քաղաքացիության ծառայություն (այսուհետ՝ ՆԳՆ ՄՔԾ) դիմելու իրավունքի մասին պատշաճ, իր համար հասկանալի լեզվով ծանուցվել է դեռեւս 2023 թվականի մայիսի 21-ին, սակայն չի օգտվել այդ իրավունքից եւ սահմանված ժամկետում նման դիմում չի ներկայացրել համապատասխան լիազոր մարմին: 2024 թվականի հունիսի 20-ին Էմիլ Թորոսյանը ձերբակալվել է ՀՀ իրավասու մարմինների կողմից, իսկ 2024 թվականի հուլիսի 12-ին ՀՀ գլխավոր դատախազի կողմից հանձնման թույլտվության մասին որոշում է կայացվել: Վերոնշյալ որոշումը տրամադրվել է ինչպես Էմիլ Թորոսյանին՝ նրա համար հասկանալի լեզվով, այնպես էլ նրա պաշտպանին: Հանձնման թույլտվության մասին որոշման դեմ 2024 թվականի հուլիսի 22-ին Էմիլ Թորոսյանի պաշտպանի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք՝ Էմիլ Թորոսյանի՝ ՀՀ քաղաքացի հանդիսանալու հիմքով, որը 2024 թվականի օգոստոսի 7-ին Վերաքննիչ քրեական դատարանի կողմից մերժվել է: Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ներկայացվել է հատուկ վերանայման վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի 2025 թվականի փետրվարի 7-ի որոշմամբ մերժվել է:

ԼՈՒՐԵՐ

ՆԵՏՎԵԼ ԵՆ ԿԱՄՐՔԻՑ

Երեկ արտակարգ դեպք է տեղի ունեցել Երեւանում: ՀՀ ներքին գործերի նախարարության Փրկարար ծառայության 9-11 ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն ահազանգ է ստացվել, որ մի քաղաքացի Կիեւյան կամրջից իրեն ցած է նետել: Դեպքի վայր են ժամանել ՀՀ ՆԳՆ ՓԾ հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնի հերթապահ խումբը, ջրասուզակը եւ ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի օպերատիվ խումբը: Ժամանել են ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Մաշտոցի բաժնի պետ Սամվել Խմելյանն ու բաժնի պետի տեղակալ Գեւորգ Պողոսյանը: Ահազանգով ժամանել են նաեւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի 1-ին գումարտակի 1-ին վաշտի պարեկները՝ գումարտակի հրամանատար Գոռ Առաքելյանի, գումարտակի հրամանատարի տեղակալ Դավիթ Նիկողոսյանի եւ վաշտի հրամանատար Սարգիս Կիրակոսյանի գլխավորությամբ: Տարածքը սահմանազատել են նույն վաշտի ավագ պարեկ Ապեր Բագրատյանն ու կրտսեր պարեկ Գագիկ Սարգսյանը: Դեպքի վայր են ժամանել նաեւ 1-03 շտապօգնության բժիշկների հերթապահ խումբը:

ԼԱՐՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿ

Պեմզաշենում մոր եւ երկու երեխայի սպանության դեպքից ավելի քան երկու տարի անց իրավիճակը շարունակում է մնալ լարված: Նախորդ դատական նիստերից մեկից հետո՝ լարված իրավիճակը վերածվել է ծեծկռտուքի՝ կնոջն ու երկու երեխային կորցրած տղամարդու եւ սպանության գործով մեղադրյալ Արկադի Բարսեղյանի պաշտպանի միջեւ: Նշենք, որ քրեական գործն արդեն տեւական ժամանակ է՝ գտնվում է Երեւանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր Արտուշ Գաբրիելյանի վարույթում՝ հիմնական դատալսումների փուլում: Տուժող կողմի ներկայացուցիչ, փաստաբան Գարիկ Գալիկյանի փոխանցմամբ շարունակվում է վկաների հարցաքննությունը:

Հիշեցնենք, որ 2022թ. նոյեմբերի 9-ին Շիրակի մարզի Պեմզաշեն գյուղում ողբերգական դեպք է տեղի ունեցել: Գյուղի տներից մեկում հայտնաբերվել է երեք դի: Մահացածներն են եղել՝ մայրը՝ 31-ամյա Ջարինեն, ու նրա երկու երեխաները՝ 12 տարեկան դուստրը եւ 8 տարեկան որդին: Իրավապահ մարմինները հայտնել էին, որ տան ննջասենյակի մեկտեղանի մահճակալին հայտնաբերվել է արական սեռի երեխայի դի՝ կրծքավանդակի հատվածում կտրած-ծակած վերքերով, ձեռքերը եւ ոտքերը կապած վիճակում, նույն ննջասենյակի հատակին հայտնաբերվել է իգական սեռի երեխայի դի՝ կրծքավանդակի հետին մակերեսին եւ որովայնի հատվածներում կտրած-ծակած վերքերով, իգական սեռի դի՝ որովայնի եւ կրծքավանդակի հատվածներում ու կրծքավանդակի հետին մակերեսին կտրած-ծակած վերքերով՝ ձեռքերը հետնամասում թելով կապված վիճակում: Դաժան սպանության կասկածանքով նոյեմբերի 12-ին ձերբակալվել էր Շիրակի մարզի 32-ամյա բնակիչը, որը ոստիկանությունում տվել է ինքնախոստովանական ցուցմունք, հաջորդ օրը ձերբակալվել է նաեւ հանցանքը ենթադրաբար կատարած երկրորդ անձը՝ 41-ամյա տղամարդը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 18-ից 19-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 120 դեպք, որից 3-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՄՐՑՈՒՅԹԻՆ ՉԻ ՆԵՐԿԱՅԱՑԵԼ

2024 թ. մարտի 28-ի որոշմամբ նույն տարվա հուլիսին կայացել է Դիլիջան քաղաքի Ուսանողական 70 հասցեում գործող «Դիլիջանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի եւ Դիլիջան քաղաքի Ուսանողական 74 հասցեում գործող «Դիլիջանի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի միավորումը: Միավորված քոլեջը կոչվում է Դիլիջանի պետական բազմագործառութային քոլեջ: Կառավարության որոշման մեջ, որպես միավորման, հիմնավորում նշվել է՝ ելնելով Դիլիջան քաղաքում սովորողների թվաքանակի նվազեցման միտումից եւ ուսումնական հաստատություններին ամրացված տարածքների օպտիմալ օգտագործման պահանջից: Դիլիջանի բազմագործառութային քոլեջն ունի 418 ուսանող, որոնց մոտ կեսը բժշկական գործ է ուսանում: Դիլիջանի քոլեջների միավորումից հետո քոլեջի աշխատակիցների կրճատումներ չեն եղել, տնօրինությունը աշխատել է, բոլորին, թեկուզ կես դրույքով, որոշակի քանակի դասաժամերով ապահովել: Դիլիջանի բազմագործառութային քոլեջի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվել նախկինում Դիլիջանի պետական քոլեջի տնօրեն Վահագն Հովհաննիսյանը: Մոտ մեկ ամիս առաջ կայացել էԴիլիջանի բազմագործառութային քոլեջի տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ: Այդ քոլեջի կառավարման խորհրդի նախագահը Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանն է: Մրցույթին Դիլիջանի բազմագործառութային քոլեջի տնօրենի միակ հավակնորդը եղել է Վահագն Հովհաննիսյանը: Մրցույթը չի կայացել, քանի որ ԿԳՄՍ նախարարության ներկայացուցիչը չի ներկայացել: Նախարարությունից հայտնել են, որ նա այդ օրը այլ հրատապ գործ ուներ: Մարտի 4-ին տեղի կունենա նույն մրցույթը, դրան ԿԳՄՍ ներկայացուցիչը կներկայանա՞: Եթե նախարարության ներկայացուցիչն այդ անգամ էլ չներկայանա, ուրեմն ԿԳՄՍ նախարարությունը դեմ է բազմագործառութային քոլեջի տնօրենի պաշտոնում Վահագն Հովհաննիսյանի թեկնածությանը:

«ԱՆՎՏԱՆԳ» ԿԻՐԱՆՑՈՒՄ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԹԻՎԸ ՆՎԱԶԵԼ Է

2024թ. սեպտեմբերի 2-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանը Կիրանցի հիմնական դպրոցի նորաբաց շենքում հայտարարել է. «Ես ուզում եմ պատասխանատու կերպով ասել, որ Հայաստանի անկախության պատմության մեջ երբեք Կիրանցում դպրոց գնալն ավելի անվտանգ չի եղել, քան այսօր, երբեք Կիրանցում ապրելն ավելի անվտանգ չի եղել, քան այսօր: Եվ սա շատ կարեւոր արձանագրում է»: Սակայն Կիրանցի բնակիչներն այդպես չեն մտածում. նրանց մի մասն իրենց երեխաներին հարեւան գյուղերի դպրոցներ է ուղարկում: Կիրանցի հիմնական դպրոցը 2023-2024 ուսումնական տարում ուներ 42 աշակերտ, իսկ այս ուսումնական տարում ունի 34 աշակերտ: Կիրանցի դպրոցի նոր շենքը Ադրբեջանի հետ սահման համարվող մեծ պատից մոտ 30-40մետր հեռավորությամբ է գտնվում: Նախկինում հայտարարում էին, որ Կիրանցի դպրոցի նոր շենքը գործարկելուց հետո միջնակարգի կարգավիճակ է ստանալու, սակայն այդպես չեղավ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՆԴՐԱԴԱՐՁԵԼ ԵՆ

ՀԵՏԵՎՈՒՄ ԵՆ ԵՐԿՈՒ ԿՈՂՄԵՐԻՆ

Իրավիճակը հայ-ադրբեջանական սահմանին բավականին հանգիստ է: Այս պահին միջադեպեր չկան:

Այս մասին ասել է Հայաստանում ԵՄ դիտորդական առաքելության ղեկավար Մարկուս Ռիտերը: Միեւնույն ժամանակ Ռիտերը նշել է, որ երկու կողմերն էլ ամրապնդում են իրենց դիրքերը:

«Այսպիսով, երկու կողմերն էլ շարունակում են պատրաստվել ավելի վատ զարգացման, դա ակնհայտ է: Բայց մենք այս պահին լարվածություն չենք տեսնում, եւ սա ամսից ի վեր է, ուստի մենք բավականին վստահ ենք, որ տարածաշրջանը լավ ուղու վրա է: Եվ մենք միշտ ասում ենք՝ նախապատրաստված եղիր վատագույնին, բայց պատրաստ եղիր լավագույնին: Այսպիսով, մեզ թվում է, որ երկու կողմերն էլ հետեւում են այս խորհրդին»,- ասել է Ռիտերը:

Առաքելության ղեկավարի խոսքով՝ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանային միջադեպերի զգալիորեն նվազմանը նպաստել է ոչ միայն դիտորդների ներկայությունը սահմանին, այլեւ՝ քաղաքական միջավայրը:

«Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ բանակցություններն են, որոնք օգնում են միջադեպերի նվազմանը: Վստահ եմ, որ մեր ներկայությամբ մենք աջակցում ենք այս ընդհանուր գործընթացին»,- ասել է Ռիտերը:

Անդրադառնալով Հայաստանում ԵՄ դիտորդական առաքելության գործունեության վերաբերյալ Ադրբեջանի դժգոհություններին, Մարկուս Ռիտերը նշել է, որ իրենք բացահայտ պարեկություն են իրականացնում սահմանի եւ հսկողության գծի երկայնքով: Երբ հայտնվում են սահմանի ինչ-որ տեղում, միշտ մնում են այնպիսի դիրքում, որ երկու կողմերն էլ տեսնեն: Ամեն բան շատ, շատ բաց եւ թափանցիկ է, եւ առաքելությունը ոչ մի հետախուզական աշխատանք չի կատարում: Իսկ թե ինչու է դժգոհում Ադրբեջանը, Ռիտերը հորդորում է հենց Բաքվից հարցնել: «Ամեն ինչ տեսանելի է, թե ինչ ենք անում: Մենք հետեւում ենք, թե ինչ է կատարվում սահմանին: Դա նշանակում է, որ մենք ոչ միայն նայում ենք, թե ինչ է անում ադրբեջանական կողմը, մենք նաեւ հետեւում ենք, թե ինչ է անում հայկական կողմը, քանի որ Բրյուսելը ցանկանում է իմանալ մեզնից՝ ինչպես է իրավիճակը սահմանին:

Նույնիսկ այն պարեկություններին, որոնց մենք գնում ենք ուղեկցորդներով, մեկ շաբաթ առաջ հատուկ ներկայացուցչի գրասենյակի միջոցով ծանուցում ենք Բաքվին»,- ընդգծել է Ռիտերը:

Հիշեցնենք, որ Հայաստանում ԵՄ դիտորդական առաքելության տեղակայման մասին որոշումն ընդունվել էր դեռեւս 2022 թվականի հոկտեմբերին, որի համաձայն՝ Հայաստան է ուղարկվել 40 հոգանոց դիտորդական առաքելություն, որը տեղակայվել է հայ-ադրբեջանական սահմանին: Որպես առաքելության նպատակ՝ նախանշվել է իրավիճակի մոնիթորինգը, դրա վերաբերյալ հաշվետվությունն ու վերլուծությունը: Եվրամիության այս որոշումը հաջորդել է Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի, Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի միջեւ հոկտեմբերի 6-ին կայացած քառակողմ հանդիպմանը: Այսպիսով՝ պետք է նշել, որ Հայաստանում ԵՄ դիտորդական առաքելությունն առաջին հերթին ադրբեջանական ագրեսիվ քայլերը զսպելու եւ տեղում իրավիճակը ճշմարիտ գնահատելու առումով բավական լուրջ եւ դրական ազդեցություն ունի: Սա, իհարկե, Բաքվի շահերից չի բխում:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՆԱԽԿԻՆ ՄԻՊ

ՀԱԿԱՍՈՒՄ Է ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՇԱՀԵՐԻՆ

Մարդու իրավունքների նախկին պաշտպան Արման Թաթոյանի գնահատմամբ՝ Միջազգային ատյաններից Ադրբեջանի դեմ Հայաստանի գանգատներից հրաժարվելն առաջացնում է իրավական կարեւոր հարց: Ըստ նրա՝ դա հակասում է ՀՀ անվտանգությանն ու պետական մյուս շահերին, ոտնահարում է հայ ժողովրդի իրավունքները: «ՀՀ կառավարության ղեկավարն այդ հայտարարություններն անում է ՔՊ ղեկավարի իր նեղ շահերի գերակայությամբ՝ ի չարը գործադրելով ՀՀ վարչապետի կարգավիճակը եւ սխալ մեկնաբանելով Կառավարության լիազորությունները: Նա չունի այդ գանգատներից հրաժարվելու կամ այդպիսի որոշումների համար քաղաքական ճնշում գործադրելու իրավասություն:

Դա հակասում է Հայաստանի Հանրապետության անվտանգությանն ու պետական մյուս շահերին, ոտնահարում է հայ ժողովրդի իրավունքները: Այդ գանգատներից հրաժարվելը Հայաստանի Հանրապետությունը դնում է պատասխանատվության տակ սեփական քաղաքացիներին իրենց իրավունքների զանգվածային խախտումների համար պաշտպանությունից զրկելու, այդ պաշտպանությունից հրաժարվելու եւ հետագայում պաշտպանության խոչընդոտներ ստեղծելու համար, մաքրում է ադրբեջանական հանցանքները: Ուստի, գանգատներից հրաժարվելը չի կարելի «հիմնավորել»՝ Կառավարության ինչ-որ առանձին, «մեկուսացած» լիազորության վրա հղում անելով: Սա այդ դեպքը չէ:

Ընդ որում, միջազգային դատարանում միջպետական գանգատ ներկայացնելն ինքնին չի ենթադրում դրանցից հրաժարվելու Վարչապետի կամ Կառավարության բացարձակ հայեցողություն: Հրաժարվելն ունի բոլորովին այլ իրավական ռեժիմ արդեն իսկ նախաձեռնված կամ ընթացող միջազգային դատական գործընթացի պայմաններում:

Այն, որ միջազգային իրավական հարցերով Հայաստանի Հանրապետության ներկայացուցչի գրասենյակը ՀՀ վարչապետի աշխակազմի կառուցվածքային միավոր է, ոչինչ չի նշանակում: Կոպիտ սխալ էր այդ միավորը Վարչապետի աշխատակազմի մաս դարձնելը հատկապես գործող Կառավարության պարագայում, որի համար քաղաքական շահերը գերակա են պետական շահերի նկատմամբ:

Նշվածից բացի, ՔՊ ղեկավարն իր հայտարարություններով ողջամիտ կասկածներ է առաջացնում, որ այլ գործերով նման բաներ տեղի են ունեցել: Օրինակ՝ ինքը կամ իր քաղաքական թիմակիցների մի մասը մինչեւ իշխանության գալը Եվրոպական դատարան են ներկայացրել գանգատներ ու հիմա քաղաքական ճնշում օգտագործելով՝ ստիպել են հրաժարվել Հայաստանի Հանրապետության դիրքորոշումներից հանուն իրենց «հաղթանակի»»,- հայտնել է Արման Թաթոյանը:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 11 պատահար. 1 մարդ զոհվել է, 10-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄԻԱՆԳԱՄԻՑ 2 ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄ

«Ակբա» բանկը 2025 թվականի փետրվարի 20-ից մինչեւ 2025 թվականի ապրիլի 10-ը ներառյալ հրապարակային առաջարկով մեկնարկում է արժեկտրոնային ոչ փաստաթղթային պարտատոմսերի միանգամից երկու տեղաբաշխում՝ համապատասխանաբար 3.000.000.000 (երեք միլիարդ) եւ 4.000.000.000 (չորս միլիարդ) ՀՀ դրամ ծավալով:

3.000.000.000 (երեք միլիարդ) ՀՀ դրամ ծավալով պարտատոմսերի շրջանառության ժամկետը 36 ամիս է: Տեղաբաշխվելու է 30.000 (երեսուն հազար) դրամային պարտատոմս՝ տարեկան 9.5% եկամտաբերությամբ:

4.000.000.000 (չորս միլիարդ) ՀՀ դրամ ծավալով պարտատոմսերի շրջանառության ժամկետը 60 ամիս է: Տեղաբաշխվելու է 40.000 (քառասուն հազար) դրամային պարտատոմս՝ տարեկան 10% եկամտաբերությամբ:

Մեկ պարտատոմսի անվանական արժեքը կազմում է 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամ:

Պարտատոմսերի ձեռքբերման համար ներդրողները պետք է լրացնեն եւ «Ակբա» բանկ ներկայացնեն պարտատոմսերի ձեռքբերման հայտ:

3.000.000.000 (երեք միլիարդ) ՀՀ դրամ ծավալով պարտատոմսերի ձեռքբերման հայտ ֆիզիկական անձանց համար՝

Դրամային պարտատոմսերի ձեռքբերման հայտ

3.000.000.000 (երեք միլիարդ) ՀՀ դրամ ծավալով պարտատոմսերի ձեռքբերման հայտ իրավաբանական անձանց համար՝

Դրամային պարտատոմսերի ձեռքբերման հայտ

4.000.000.000 (չորս միլիարդ) ՀՀ դրամ ծավալով պարտատոմսերի ձեռքբերման հայտ ֆիզիկական անձանց համար՝

Դրամային պարտատոմսերի ձեռքբերման հայտ

4.000.000.000 (չորս միլիարդ) ՀՀ դրամ ծավալով պարտատոմսերի ձեռքբերման հայտ իրավաբանական անձանց համար՝

Դրամային պարտատոմսերի ձեռքբերման հայտ

«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ բանկի թողարկած անվանական պարտատոմսերով ներգրավված դրամական միջոցները համարվում են երաշխավորված բանկային ավանդ եւ երաշխավորված են «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ԵՄ ներմուծման ընթացակարգերում կատարվել են փոփոխություններ, որոնք ուժի մեջ կմտնեն 2025 թվականի ապրիլի 1-ից: Այս մասին հայտնում են ՀՀ պետական եկամուտների կոմիտեից:

Մասնավորապես, 2025 թվականի ապրիլի 1-ից Եվրամիության մաքսային նախաժամանման ապահովության եւ անվտանգության համակարգը երկաթուղային եւ ավտոմոբիլային փոխադրողներից կպահանջի տրամադրել տվյալներ ԵՄ երկրներ ուղարկվող կամ դրանց տարածքով անցնող ապրանքների մասին մինչեւ դրանց ժամանումը:

«ԲՎԻԿ» ԵՎ «ԻԴՐԱՄ»

ԽԹԱՆՈՒՄ ԵՆ ՄԵՐԸ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ

Գրառաս փետրվարին «Բվիկ» նախաձեռնությունն ամփոփեց Իդրամի հետ համագործակցությամբ իրականացված «Թռիչք գրքի թեւերով» ընթերցանության մրցույթի արդյունքները: Մրցույթի նպատակն է 14-18 տարեկան դեռահասների շրջանում սեր եւ հետաքրքրություն առաջացնել գրքի հանդեպ, զարգացնել արագ ընթերցելու, վերլուծելու, կարծիք արտահայտելու հմտությունները, ձեւավորել քննադատական մտածողություն:

Միջոցառումն իր հարկի տակ հյուրընկալել էր Ավետիսյան միջնակարգ դպրոցը: Վեց ամիս տեւած մրցութային փուլերից հետո եզրափակիչ անցած Հայաստանի տարբեր դպրոցներից թվով 66 աշակերտների համար կազմակերպվել էր ընթերցանության իսկական տոն, որի ընթացքում հաղթողներին են հանձնվել գլխավոր մրցանակները:

«Բվիկ» կրթական հիմնադրամի տնօրեն Անահիտ Յուզբաշյանը նշում է. ««Իդրամի» հետ համագործակցությունը շատ կարեւոր էր, եւ հենց այս համագործակցության շնորհիվ եւս կարողացանք իրականացնել այս մրցույթը՝ միասին խթանելով ընթերցասիրությունը երիտասարդ սերնդի մեջ»:

20 գրքից բաղկացած գրականության ցանկում ներառված են եղել տարիքային խմբերին համապատասխան համաշխարհային ճանաչում ունեցող սիրավեպեր, արկածային, դետեկտիվ ժանրի գրքեր եւ պատմավեպ: Իդրամի հետ փոխգործակցության արդյունքում մրցույթի եզրափակիչ օրը դպրոցականների հետ անցկացվեց նաեւ ֆինանսական գրագիտության թեմայով սեմինար, որի ընթացքում դպրոցականներին ներկայացվեց կարեւոր ու անհրաժեշտ տեղեկատվություն ֆինանսների գրագետ տնօրինման, խնայելու կարեւորության ու զեղծարարներից պաշտպանված լինելու անվտանգային կանոնների մասին:

«Իդրամի» սոցիալական պատասխանատվության ծրագրերի բաժնի պատասխանատու Մանե Գասպարյանը նշում է. «Եթե ուզում ենք ֆինանսապես գրագետ սերունդ ունենալ, նախ պետք է նրանց մտերմացնենք գրքի հետ, սովորելու ցանկություն արթնացնենք եւ հետո միայն ցույց տանք ֆինանսների աշխարհում անվտանգ լինելու ճանապարհը: Այսօր նաեւ «Իդրամ Ջունիորի» հետ ֆինանսական կրթությանը նվիրված փոքրիկ սեմինար անցկացրինք ու շատ ոգեւորված ենք աշակերտների արձագանքից, երեխաների հետաքրքրվածությունից»:

Դուք եւս կարող եք միանալ «Ջունիորի» հետաքրքիր ու զվարճալի ճամփորդությանը՝ պարզապես ներբեռնելով հավելվածը Ձեր երեխաների սմարթֆոններում: Idram Junior հավելվածի միջոցով երեխաները հնարավորություն կստանան անկանխիկ գումար ունենալ, անհպում վճարումներ կատարել, խնայել եւ ֆինանսական գրագիտություն սովորել, իսկ ծնողները՝ վերահսկել երեխաների ֆինանսական գործողությունները ժամանակակից եւ անվտանգ գործիքի միջոցով:

Ընկերությունները վերահսկվում են ՀՀ ԿԲ կողմից

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԶՐԿՎԱԾ ԵՆ ԳԱԶԻՑ ՈՒ ՀՈՍԱՆՔԻՑ

Դիլիջանի գիշերօթիկի շենքում բնակություն հաստատած 7 արցախցի ընտանիքներ ձմեռվա ընթացքում զրկված են գազից ու էլեկտրաէներգիայից ինչպես բլոկադայի ամիսներին՝ Արցախում: Սոցապ նախարարությունն ասել է՝ այլ առաջարկ ենք արել, թող գնան: Շատերը ընդունել են առաջարկն ու հեռացել գիշերօթիկից, բայց մնացած այս 7 ընտանիքները ամենաքշվածներն են՝ տարբեր խնդիրներով: Արված առաջարկները նրանց կարող են առավել վատ վիճակի մեջ դնել:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ

2026 թ. հունվարի 1-ից աշխատանքային պայմանագրերը կկնքվեն էլեկտրոնային եղանակով: Այս մասին երեկ տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ ասել է ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի եւ զբաղվածության վարչության պետ Ժորա Սարգսյանը: Ըստ նրա՝ այն, ինչ հիմա պարտադիր է լինում թղթային եղանակով պայմանագիր կնքելու համար, նույն սկզբունքով դրանք կկնքվեն էլեկտրոնային համակարգում, կլրացվեն բոլոր պարտադիր դաշտերը:

«Երբ գործատուն լրացնում է բոլոր պարտադիր դաշտերը, դրանից հետո նաեւ նա ստորագրում է էլեկտրոնային եղանակով, վերջինս ունի լիազորելու հնարավորություն, որ իր անունից նաեւ այլ անձ ստորագրի, որովհետեւ նման հնարավորություն Աշխատանքային օրենսգրքով տրված է: Աշխատողները պետք է ունենան էլեկտրոնային ստորագրություն, որպեսզի կարողանան ստորագրել պայմանագրերը: Ամեն դեպքում, նրանք եկամուտների պարտադիր հայտարարագրման շրջանակներում պետք է դա ունենան, հետեւաբար այս հարթակում ստորագրելն իրենց համար հավելյալ բեռ չի ավելացնի, որովհետեւ այս կարգավորումն ուժի մեջ է մտնելու 2026 թվականի հունվարի 1-ից, ստացվում է՝ բոլոր աշխատողները մինչեւ 2026 թվականի հունվարի 1-ը, այնուամենայնիվ, պետք է ունենան էլեկտրոնային ստորագրություն», - ասել է նա:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

«ԱՆԱՀԻՏ»

ԸՆԴԳՐԿՎԵԼ Է ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՈՒՄ

Մոսկվայի պետական լեզվաբանական համալսարանում տեղի է ունեցել «Քարե հսկաների լեգենդները» եվրասիական հեքիաթների ժողովածուի շնորհանդեսը:

Գրքում ներկայացված է ԱՊՀ երկրների ժողովուրդների մեկական հեքիաթ՝ ինչպես ռուսերենով, այնպես էլ տվյալ ժողովրդի մայրենի լեզվով: Թարգմանությունները կատարվել են լեզվաբանական համալսարանի դասախոսների կողմից, եւ ժողովածուի բոլոր հեքիաթները ունեն թեմատիկ ընդհանրություն՝ լեռները:

Շնորհանդեսի ժամանակ ունեցած բացման խոսքում համալսարանի միջազգային համագործակցության նախագծային գրասենյակի տնօրեն Օլգա Եգորովան նշեց, որ հենց լեռներն են պահպանում ազգային արժեքները, հենց լեռներում է, որ մարդը գտնում է բոլոր հարցերի պատասխանները, եւ իզուր չէ, որ ժողովուրդները լեռներին են վերագրել լեգենդները: «Թարգմանությունն այն տարածությունն է, որ միացնում է ազգերին: Իսկ բոլոր ազգերի հեքիաթներում էլ բարին հաղթում է չարին: Ու քանի որ այսօրվա երեխաները վաղվա հասարակությունն են, շատ կարեւոր է, թե ինչ է մատուցվում նրանց: Հույս ունենք, որ ծրագիրը շարունակական բնույթ կկրի»,-նշել է բանախոսը:

Հայկական ժողովրդական հեքիաթներից ժողովածուում ընդգրկվել է «Անահիտ»-ը՝ Մոսկվայի պետական լեզվաբանական համալսարանի հայոց լեզվի ու մշակույթի կենտրոնի թարգմանությամբ:

Կենտրոնի տնօրեն Արմինե Մարտիրոսյանը, բարձր գնահատելով նախաձեռնության արդյունավետությունը, նշել է, որ խնդիր էր դրված ներկայացնելու ԱՊՀ երկրների մշակույթը նոր ժամանակներում: «Թարգմանության մեջ դժվարություն ներկայացնողը հիմնականում դարձվածքներն ու ժողովրդին հատուկ բարբառային արտահայտությունների իմաստային նրբություններն են: Բայց ուրախ եմ, որ հենց «Անահիտ»-ն էր ընտրված, որովհետեւ այն մեծ դաստիարակչական ուժ ունի եւ լավագույնս բնութագրում է հայ ժողովրդին»,- ասել է նա՝ընդգծելով նախագծի շարունակականության կարեւորությունը: Գիրքը լույս է տեսել հազար տպաքանակով:

Նշենք, որ ինչպես այլ ժողովուրդների, այնպես էլ հայերի հեքիաթներում մեծ տեղ են զբաղեցնում հրաշապատում հեքիաթները: Պատումի սկզբում հրաշքի արտացոլման առարկաներ են հանդիսանում ամենից առաջ բնության ուժերը, որոնք հետագա զարգացման ընթացքում զանազան ժողովուրդների մոտ երեւան են գալիս ամենաբազմազան ու խայտաբղետ անձնավորումներով:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԹԵՄԱՏԻԿ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԸ ՄԵՂԱԴՐԵԼ Է

Երուսաղեմի Հայոց պատրիարքարանը մեղադրել է Իսրայելի իշխանություններին կրոնական կազմակերպության դեմ «անարդար, նպատակային եւ կեղտոտ հարկեր» գանձելու համար, ինչն ուղղված է եկեղեցու ներկայությունը Սուրբ Երկրում նվազեցնելուն: Երուսաղեմի հայոց պատրիարքարանի X-ի էջում ասվում է, որ Երուսաղեմի քաղաքապետարանը ձգտում է բռնագրավել դարեր շարունակ իրեն պատկանող գույքը եւ այն աճուրդի հանել՝ 1994 թվականից ի վեր իբր գոյացած համայնքային պարտքերը հավաքելու համար:

«Եթե, Աստված մի արասցե, պատրիարքարանի միջնորդությունը մերժվի, Երուսաղեմի քաղաքապետարանը կալանք կդնի Պատրիարքարանին պատկանող անշարժ գույքի վրա եւ այն աճուրդի կհանվի՝ ենթադրյալ վիճելի պարտքերը վերականգնելու համար, որոնք երբեք չեն ապացուցվել դատական կարգով»,- ասվում է Երուսաղեմի հայոց պատրիարքարանի տարածած հաղորդագրության մեջ:

ԲՐԵՆԴԸ ՎԱՏ ՎԻՃԱԿՈՒՄ Է

Nike-ը անկում է ապրում. Վաճառքները նվազում են, բաժնետոմսերը կորցրել են իրենց արժեքի ավելի քան մեկ քառորդն անցած տարվա ընթացքում, եւ նրա նոր գործադիր տնօրենը օգնության կարիք ունի մարզական ընկերության վերակենդանացման համար: Օգնության է հասել Քիմ Քարդաշյանը: Nike-ը համագործակցում է Քարդաշյանի հետ՝ ստեղծելու նոր ապրանքանիշ, որը կոչվում է «NikeSkims»: Այս մասին երեքշաբթի օրը համատեղ հայտարարել են ընկերությունը եւ նորաձեւության մագնատը: Հավաքածուն, որը հիմնված է նրա հանրահայտ ձեւի հագուստի շարքի վրա, «կփոխի ֆիթնեսի եւ ակտիվ հագուստի համաշխարհային արդյունաբերությունը՝դասի լավագույն նորամուծություններով բոլոր կին մարզիկների համար», ասվում է մամուլի հաղորդագրության մեջ:

Ապրանքանիշի դեբյուտը ԱՄՆ-ում այս տարվա գարնանը կանցնի առցանց եւ «ընտրված մանրածախ վայրերում», իսկ համաշխարհային մեկնարկը նախատեսվում է 2026 թվականին:

Նոր հավաքածուն առաջինն է Nike-ի համար, որը նախկինում չի համագործակցել արտաքին ընկերության հետ՝նոր ապրանքանիշ ստեղծելու համար, փոխարենը հույսը դնում է ձեռքբերումների վրա կամ վարձում է հայտնի մարզիկների (օրինակ՝Մայքլ Ջորդանը)

«Ավելին, քան համագործակցությունը, նոր ապրանքանիշը նոր ստանդարտ կսահմանի ֆիթնեսի եւ ակտիվ հագուստի համաշխարհային ոլորտում՝ մարզչական հագուստի, կոշիկի եւ աքսեսուարների լայն գծով»: Նոր ապրանքանիշը կօգնի Nike-ին ավելի արդիական դառնալ ակտիվ հագուստի կատեգորիայում՝ օգնելով նրան մրցակցել Lululemon-ի եւ Alo-ի հետ, որտեղ «նա հետ է մնում եւ երկրորդ ջութակի դերում է», - ասում է մանրածախ առեւտրի վերլուծաբան եւ GlobalData Retail-ի գործադիր տնօրեն Նիլ Սաունդերսը:

Amazon–Ի ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԸ ԿԱՋԱՏԱՋՐԿՎԻ՞

Առցանց հարթակների ձեռներեցներին, այդ թվում՝ Amazon-ի սեփականատեր Ջեֆ Բեզոսին, ըստ Մեծ Բրիտանիայում նոր իրավական կարգավորումների, սպառնում է մինչեւ երկու տարվա ազատազրկում, եթե նրանք դանակներ վաճառեն մինչեւ 18 տարեկան երեխաներին: Միացյալ Թագավորության Ներքին գործերի նախարար Իվետ Կուպերը բարձրացնում է անչափահասներին դանակներ վաճառելու համար նախատեսված առավելագույն պատիժը վեց ամսից մինչեւ երկու տարի՝ներմուծելով օրենքներ, ըստ որոնց, պատիժը կկիրառվի վաճառքն իրականացնող անհատի կամ ընկերության գործադիր տնօրենի նկատմամբ: Օրենքները կվերաբերեն ինչպես խոհանոցային դանակների վաճառքին, այնպես էլ արգելված զենքերին, ինչպիսիք են «զոմբի» դանակները: Օրենսդրական փոփոխություններին նախորդել է 2024 թ. հուլիսին Սաութփորթում պարի դասընթացի ժամանակ երեք աղջիկների սպանությունը 17-ամյա Ակսել Ռուդակուբանանի կողմից, որը դանակը գնել էր Amazon-ից: Երիտասարդ մարդասպանը կարողացել էր շրջանցել առցանց խանութի երկփուլ անձը հաստատող ստուգումները՝օգտագործելով ծրագրակազմ, որը կոդավորում է անձնական տվյալները եւ քողարկում օգտագործվող ինտերնետային հասցեն:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՈՐՆ Է ԿԱՐԵՎՈՐ

Մոսկվայի «Լոկոմոտիվի» պաշտպան Նաիր Թիկնիզյանն ասել է, որ իր համար ավելի կարեւոր է մոսկովյան թիմի հետ մեկ չեմպիոնական տիտղոս նվաճելը, քան «Զենիթի» հետ հինգ անգամ Ռուսաստանի չեմպիոն դառնալը: Սանկտ-Պետերբուրգը ներկայացնող թիմը մեկ տարի առաջ հետաքրքրված էր հայ ֆուտբոլիստի տրանսֆերով, սակայն տրանսֆերը այդպես էլ չկայացավ: «Իմ կարծիքով, ռուսական անձնագրով խաղացողի համար «Զենիթը» պատմություն է ոչ թե ֆուտբոլի, այլ փողի մասին: Ես ինքս որոշեցի, որ եթե ամբողջությամբ նվիրվեմ ֆուտբոլին, ինչպես անում եմ, ապա ֆինանսական տեսանկյունից ինձ լավ կզգամ «Լոկոմոտիվում»: Եվ գիտեք, «Լոկոմոտիվի» հետ մեկ առաջնությունն ինձ համար ավելին արժե, քան հինգը՝ «Զենիթի» հետ»,-Թիկնիզյանի խոսքերն է մեջբերում «Спорт-экспресс»-ը:

Այս մրցաշրջանում 25-ամյա Թիկնիզյանը բոլոր մրցաշարերում մասնակցել է 23 հանդիպման՝դառնալով 2 գոլի եւ երեք գոլային փոխանցման հեղինակ: Նաիրիի ներկայիս աշխատանքային պայմանագիրը «Լոկոմոտիվի» հետ նախատեսված է մինչեւ 2026 թվականի ամառը: Transfermarkt պորտալում ներկայացված տեղեկատվության համաձայն՝ ֆուտբոլիստի շուկայական արժեքը կազմում է 6 միլիոն եվրո:

ԴԵՎԻՍԸ՝ ԳՈԼԻ ՄԱՍԻՆ

«Բավարիան» սեփական հարկի տակ 0-1 հաշվով զիջում էր «Սելթիկին», եւ հանդիպումը մոտ էր լրացուցիչ ժամանակին: Սակայն ավելացված ժամանակի չորրորդ րոպեին մյունխենցիները հավասարեցրին հաշիվը եւ առաջ անցան (3-2՝ընդհանուր հաշվով): Գոլը, որը հավասարեցրեց հաշիվը, խփեց Ալֆոնսո Դեւիսը: հանդիպումից հետո նա մեկնաբանություն է տվել. «Գնդակը տուգանային հրապարակի մյուս կողմում էր, ուստի ես ուղղակի վազեցի տուգանային հրապարակի մյուս կողմ: Ես շատ չմտածեցի: Ես ուղղակի մեկնեցի ոտքս, եւ գնդակը հայտնվեց ցանցի մեջ: Ուրախ եմ Չեմպիոնների լիգայում եւս մեկ գոլ խփելու համար»,- Դեւիսի խոսքերն է մեջբերում Bayern & Germany-ին:

ԳԱՍՊԵՐԻՆԻՆ ՔՆՆԱԴԱՏԵԼ Է

«Ատալանտայի» գլխավոր մարզիչ Ջան Պիերո Գասպերինին քննադատել է թիմի հարձակվող Ադեմոլա Լուկմանին Չեմպիոնների լիգայի՝ բելգիական «Բրյուգեի» հետ պատասխան խաղում 11 մետրանոցը չիրացնելու համար: «Լուկմանը 11 մետրանոցների մասնագետ չէ: Նա վերցրեց գնդակը եւ իրացրեց 11 մետրանոցը, չնայած Ռետեգին եւ Դե Կետելարեն կարող էին իրացնել հարվածը: Ինձ իսկապես դուր չեկավ, թե ինչպես վարվեց Ադեմոլան»,- մասնագետի խոսքերն է փոխանցում ինսայդեր Ֆաբրիցիո Ռոմանոն:

Պատասխան հանդիպումն ավարտվեց «Բրյուգեի» հաղթանակով՝ 2-1 հաշվով:

● *Խամաճիկների պետական թատրոնում փետրվարի 28-ին, մարտի 1, 2-ին տեղի կունենա «Փոքրիկն ու Կառլսոնը» միջոցառումը: Տոմսերի արժեքը՝1500 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ, թե ի՞նչ կարգով է իրականացվում ամուսնալուծությունը եւ դրա պետական գրանցումը, ի՞նչ փաստաթղթեր են ներկայացվում ամուսնալուծության պետական գրանցման համար, ի՞նչ ժամկետում է կատարվում ամուսնալուծության պետական գրանցումը, որքա՞ն է կազմում պետական տուրքի դրույքաչափը:

Կարինե Մինասյան
(39 տարեկան, տնային տնտեսուհի)

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե ամուսինների միջեւ առկա է ամուսնալուծվելու վերաբերյալ փոխադարձ համաձայնություն, ապա նրանց ամուսնալուծությունը կատարվում է ՔԿԱԳ մարմնում:

Ամուսնալուծության գրանցման համար ամուսինները ՔԿԱԳ մարմին են ներկայացնում համատեղ դիմում: Եթե ամուսիններից մեկը հնարավորություն չունի անձամբ ներկայանալու ՔԿԱԳ մարմին՝ ամուսնալուծության մասին համատեղ դիմում տալու համար, ապա ամուսինների կամքի արտահայտությունը կարող է ձեւակերպվել ամուսնալուծության մասին առանձին հայտարարություններով: Ամուսնալուծության պետական գրանցման համար ներկայացվում է՝ անձը հաստատող փաստաթուղթ, ամուսնության վկայական (առկայության դեպքում), ամուսինների համատեղ դիմումը՝ ՔԿԱԳ մարմնում ամուսինների միջեւ փոխադարձ համաձայնության առկայությամբ ամուսնալուծություն կատարելու համար, ամուսիններից մեկի դիմումը, եթե մյուսը դատարանի կողմից ճանաչվել է անհայտ բացակայող կամ անգործունակ կամ դատապարտվել է ազատազրկման երեք տարուց ոչ պակաս ժամկետով, ամուսինների դիմումը եւ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը՝ դատական կարգով ամուսնալուծություն կատարելու դեպքում: Ամուսնալուծության գրանցումը եւ ամուսիններից յուրաքանչյուրին ամուսնալուծության վկայականներ տրամադրելը կատարվում է ՔԿԱԳ մարմնի կողմից ամուսնալուծության մասին ամուսինների դիմում տալու օրվանից առնվազն մեկ ամիս հետո, բայց երեք ամսից ոչ ուշ: Ամուսնալուծության պետական գրանցման համար, ներառյալ վկայական տալը, գանձվում է պետական տուրք՝ 10000 ՀՀ դրամ:

ՀՀ արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ ամուսնալուծության պետական գրանցման ժամանակ մինչամուսնական ազգանունը կրելու ցանկության դեպքում գանձվում է նաեւ 5000 ՀՀ դրամ պետական տուրք:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԱՎԱՆԴՆԵՐ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասեք, թե ինչպե՞ս կարող են ավանդատուները տեղեկանալ ավանդների հատուցման դեպքի մասին:

Ալլա Պետրոսյան (67 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հիմնադրամը հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային http://www.azdarar.am կայքում եւ առնվազն հանրային մեկ լրատվամիջոցով հայտարարություն է հրապարակում հատուցման դեպքի մասին՝ նշելով երաշխավորված ավանդն ստանալու կարգը, ներառյալ՝ ավանդատուի գրավոր կամ էլեկտրոնային եղանակով պահանջի ներկայացման կարգը, անհրաժեշտ փաստաթղթերի ու տեղեկությունների ցանկը, պայմանները, եղանակները, ժամկետները:

Հատուցման դեպքին հաջորդող 10-րդ աշխատանքային օրվանից առնվազն մեկ օր առաջ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային http://www.azdarar.am կայքում եւ առնվազն հանրային մեկ լրատվամիջոցով հրապարակում է լրացուցիչ հայտարարություն, որտեղ նշվում են՝

ա) երաշխավորված ավանդների վճարումն իրականացնող բանկի եւ դրա մասնաճյուղերի անվանումները եւ հասցեները.

բ) ավանդատուի գրավոր կամ էլեկտրոնային եղանակով ներկայացված պահանջի եւ Հիմնադրամի տրամադրած ավանդատուների ցուցակի միջ եւ տեղեկությունների անհամապատասխանության դեպքում՝ երաշխավորված ավանդի հատուցումն ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ երաշխավորվում են ավանդատուի եւ դրամային եւ արտարժութային ավանդները:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Նույնիսկ արդեն խաչբառերում է «բացահայտվել», թե Նիկոլ Փաշինյանն ինչ աղետի առաջ է կանգնեցրել հայերին: «Նիկոլի բերածը մեր գլխին» գլուխկոտրուկի պատասխանն է՝ աղետ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	-4 -11 -3 +2
	Կոտայքի լեռներ	-6 -10 -2 +2
	Կոտայքի նախալեռներ	-4 -9 0 +3
	Գեղարքունիք	-6 -11 -3 +1
	Լոռի	-7 -10 -1 +4
	Տավուշ	-3 -6 0 +2
	Արագածոտնի լեռներ	-9 -14 -2 +4
	Արագածոտնի նախալեռներ	-1 -3 -1 +5

	Արարատ	0 -5 +1 +4
	Արմավիր	-3 +1 +4 +6
	Վայոց ձորի լեռներ	-4 -7 +2 +4
	Վայոց ձորի նախալեռներ	-2 +2 +4 +6
	Սյունիքի հովիտներ	-6 -9 0 -4
	Սյունիքի նախալեռներ	0 +3 +7 +10
	ԼՂՀ	0 +2 +6 +8
	Երեւան	-2 -6 +5 +9

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **19.2.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*